ՀՀ ԿԳՄՍՆ «ՀՐԱԶԴԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊՈԱԿ

ГНО «РАЗДАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
КОЛЛЕДЖ» МОНКС РА
MESCS RA «HRAZDAN STATE COLLEGE» SNCO

2307, ք. Հրազդան, Գործարանային 3: Հեռ.՝ 374 93 93 80 45, 091 19 03 76:
2307, г. Раздан, Горцараная 3. Тел. 374 93 93 80 45, 091 19 03 76.
2307, Hrazdan city, Gorcaranayin 3. Tel. 374 93 93 80 45, 091 19 03 76.
E-mail: hrazdan.usum@gmail.com

05.08.2026թ.
07-26

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարար Ժ. Անդրեասյանին

Հարգելի տիկին Անդրեասյան

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ, որ հիմնականում 2026 թվականի ընդունելության արդեն իսկ առկա արդյունքներով պայմանավորված՝ մեր ղեկավարած ուսումնական հաստատությունում ձևավորվել են մանկավարժական մի շարք աշխատողների՝ «Խոհարարական գործ»" «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտությունների արտադրական (գործնական) ուսուցման վարպետների և «Ինֆորմատիկա և ՏՀՏ» («Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն») առարկայի դասախոսի մեկական թափուր տեղեր:

Թափուր պաշտոնների մրցույթների մասին կհայտարարվի 2026 թվականի օգոստոսի 10-ին: «Խոհարարական գործ»" «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտությունների վարպետների մրցույթները տեղի կունենան 2026 թվականի օգոստոսի 24-ին՝ համապատասխանաբար ժամը 12-ին ու 14:30-ին, իսկ վերջին երկու մանկավարժական աշխատողների մրցույթները տեղի կունենան սույն թվականի օգոստոսի 25-ին՝ համապատասխանաբար ժամը՝ 12-ին ու 14:30-ին:

Վարպետների թափուր պաշտոններին կարող են հավակնել այն անձինք, որոնք ունեն տվյալ մասնագիտություններով աշխատանքի փորձ ու մասնագիտական կրթություն, իսկ դասախոսի պաշտոնի համար կարող են դիմել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները բավարարող անձինք:

Տնօրեն՝ Անդրանիկ Սարիբեկյան